ՖԵՅՐՎԱՅԼԴ ՍՏԱՆԴԱՐՏ

Տարբերակ 2.0

Հաստատված է Ֆեյրվայլդի խորհրդի կողմից օգոստոսի 26-ին, 2010 թ.

Միաձուլում է դեղամիջոցների և անուշաբույր վայրի բույսերի (ISSC-MAP) հավաքը՝ 1.0 տարբերակը (MPSG 2007) և Ֆեյրվայլդ ստանդարտ 1 տարբերակը, 2006

FAIRWILD

Շապիկի նկարները՝ Միքլեռ, Պատզոլդ, Քաննինգհըմ (վերևում)
Սթրոհբեգ, Շիփմեն (ներքևում)

Սույն և նմանատիպ այլ փաստաթղթեր կարող եք գտնել Ֆեյրվայլդի ինտերնետային կայքում՝ www.FairWild.org

Հավելյալ տեղեկությունների համար դիմեք

Ֆեյրվայլդ հիմնադրամի քարտուղարություն, Վայնֆելդեն, Շվեյցարիա՝
CH-8570 Weinfelden, Weststr. 51
Switzerland
Հեռ.: +41-(0)71-626 0 626
Ֆաքս: +41-(0)71-626 0 623
Էլ. փոստ: info@FairWild.org

Մեկնաբանություններ՝ Ֆեյրվայլդ ստանդարտ 2.0 տարբերակի վերաբերյալ դիտողությունները ողջունելի են: Խնդրում ենք Ձեր հարցերն ու առաջարկներն ուղարկել հետևյալ հասցեով՝ info@FairWild.org.

Հղում՝ Ֆեյրվայլդ հիմնադրամ, 2010: Ֆեյրվայլդ ստանդարտի տարբերակ 2.0: Ֆեյրվայլդ հիմնադրամ, Վայնֆելդեն, Շվեյցարիա:

©Ֆեյրվայլդ հիմնադրամ, Շվեյցարիա:

Վերահրատարակություն՝ Ֆեյրվայլդ ստանդարտից օգտվողների կամ այլոց կողմից սույն փաստաթղթի օգտագործումը կրթական կամ այլ ոչ-առևտրային նպատակներով թույլատրելի է առանց փաստաթղթի հեղինակային իրավունքի տիրոջից նախապես գրավոր թույլատրություն ստանալու:

Սույն փաստաթղթի օգտագործումը վերավաճառքի կամ այլ առևտրային նպատակներով արգելվում է առանց փաստաթղթի հեղինակային իրավունքի տիրոջից նախապես գրավոր թույլատրություն ստանալու:

Ծանոթություն

Ֆեյրվայլդ ստանդարտ 2.0 տարբերակը մշակվել և պատրաստվել է մի շարք կազմակերպությունների և անհատների ջանքերի շնորհիվ, ովքեր համատեղել են իրենց գիտելիքները, ժամանակը և փորձը՝ վերլուծելու, թե ինչպես է հնարավոր վայրի հավաքված ռեսուրսների առևտուրը ավելի կայուն դարձնել:

Վերանայման գործընթացը հնարավոր դարձավ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բնության պահպանության գործակալության (Bundesamt fЖr Naturschutz, BfN) և Գերմանիայի վայրի բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) առատաձեռն ֆինանսական աջակցության շնորհիվ: Մենք երախտապարտ ենք Շուկայավարման Էկոլոգիայի Ինստիտուտի անձնակազմին (IMO) Ֆեյրվայլդ ստանդարտ 2.0 տարբերակի ցուցանիշների զարգացման և փորձարկման գործում մեծ ներդրման համար և Բնության պահպանության միջազգային ակադեմիային՝ Վիլմ, Գերմանիա, այս ստանդարտին նպաստող մի քանի սեմինարներ կազմակերպելու համար:

Այս ստանդարտի դաշտային փորձարկումը մեծ օգուտ է քաղել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից իրականացվող նախագծերի փորձից (Bundesministerium für Wirtschaftliche Zusammenarbeit, BMZ), ԵՄ-Չինաստան կենսաբազմազանության ծրագրից (ECBP), Շվեյցարական ներմուծման խթանման ծրագրից (SIPPO), Գերմանիայի վայրի բնության համաշխարհային ֆոնդից (WWF), ավանդական բուժիչ միջոցներից, Martin Bauer ընկերությունից, Essenzia ֆորումից, ProFound-ից, Kuendig-ից, Bahnhof-Apotheke Kempten-ից, Հարավային Ամերիկայի Բնության և բնական ռեսուրսների պահպանության միջազգային միությունից (IUCN), IUCN/SSC բուժիչ բույսերի մասնագիտացված խմբից, առողջապահության տեղական ավանդույթների վերականգնման հիմնադրամից (FRLHT)՝ Հնդկաստան, Լեռնային շրջանների ինտեգրացված զարգացման միջազգային կենտրոնից (ICIMOD)՝ Նեպալ և Տրաֆիկ: Ֆեյրվայլդ հիմնադրամը աշխատել է համայնքների, հավաքական կոոպերատիվների, հետազոտական ինստիտուտների, կառավարման մարմինների և այն կազմակերպությունների հետ, որոնք ներգրավված են վայրի բերքի հավաքման, մշակման և սպառման գործում: Վերջիններիս ներդրումները վերամշակման գործընթացում էական նշանակություն ունեն:

Վերամշակման գործընթացը ձեռնարկվել է Ֆեյրվայլդ հիմնադրամի տեխնիկական հանձնաժողովի անդամների կողմից՝ Ֆեյրվայլդ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հսկողության ներքո:

Բովանդակություն

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2
1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4
1.1 Կիրառությունը և նպատակը 4
1.2 Ֆեյրվայլդ ստանդարտ 2.0 տարբերակի կառուցվածքը 6
2 ՖԵՅՐՎԱՅԼԴ ՍՏԱՆԴԱՐՏ 2.0 ՏԱՐԲԵՐԱԿ 7
2.1 Ֆեյրվայլդի սկզբունքներն ու չափանիշները բերքի հավաքման գործողությունների վերաբերյալ 7
ԲԱԺԻՆ 1. ՎԱՅՐԻ ԲԵՐՔԻ ՀԱՎԱՔՄԱՆ և ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 7
ԲԱԺԻՆ 2. ԻՐԱՎԱԿԱՆ և ԷԹԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ 8
ԲԱԺԻՆ 3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ և ԱՐԴԱՐ ԱՌԵՎՏՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐ 9
ԲԱԺԻՆ 4. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԲԻԶՆԵՍԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 10
2.2 Ֆեյրվայլդ սկզբունքները և չափանիշները վայրի բույսերի զնորդների համար 11
ՀՂՈՒՄՆԵՐ 12
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 13

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Կիրառությունը և նպատակը

Ֆեյրվայլդ ստանդարտ 2.0 տարբերակը կիրառվում է վայրի բույսերի հավաքման ժամանակ՝ փորձելով ցուցադրել իրենց նվիրվածությունը, հասարակական պատասխանատվությունը և ազնիվ առևտրի սկզբունքները: Այս ստանդարտը միաձուլում է դեղամիջոցների և անուշաբույր վայրի բույսերի (ISSC-map) հավաքածուն՝ 1.0 տարբերակը (MPSG 2007) և Ֆեյրվայլդ ստանդարտ 1 տարբերակը (MEINSHAUSEN et al. 2006)՝ մեկ բազմակողմանի Ֆեյրվայլդ ստանդարտի կայուն վայրի հավաքածուի մեջ:

Ֆեյրվայլդ ստանդարտի **նպատակն է** ապահովել բույսերի տեսակների շարունակական օգտագործումը և երկարաժամկետ գոյատևումը իրենց իսկ միջավայրում՝ հարգելով տեղական ավանդույթներն ու մշակույթները և ապահովելով բոլոր շահագրգիռ կողմերի՝ մասնավորապես հավաքողների և աշխատողների ապրուստը:

Սննդամթերքի, կոսմետիկայի, բարեկեցության և դեղաբույսերի ոլորտում բնական արտադրանքի աճող պահանջարկը խոշոր բնապահպանական և հասարակական մարտահրավերներ է նետում: Վայրի ռեսուրսների վրա ընթացիկ և ընդլայնվող առևտրային բերքի ճնշումը կարող է սպառնալ բուսական աշխարհի և բուսական տեսակների գոյատևմանը, ինչպես նաև վտանգել տեղական էկոհամակարգերը: Կառավարությունները, գործարարները և սպառողները գիտակցում են, որ բույսերի նվազող հասանելիությունը և այս վայրի ռեսուրսների կորուստը լայնորեն սպառնում է առողջությանն ու տնտեսություններին և խարխլում բույսեր հավաքողների ապրուստը, ովքեր հաճախ ամենաաղքատ սոցիալական խմբերին են պատկանում: Բնապահպանական, սոցիալական և տնտեսական նպատակները պետք է խաչվեն, և վայրի բույսերի հավաքումը կայուն դարձնելու համար պետք է գործածվի ամենաարդյունավետ փորձը: Ֆեյրվայլդ ստանդարտը ստեղծված է այս մարտահրավերներին բավարարելու համար:

Ֆեյրվայլդ ստանդարտը լրացնում է այն բացը, որը գոյություն ունի մի կողմից առկա պահպանության ուղեցույցների և բարոյական օրենսգրքերի, մյուս կողմից հավաքման-կառավարման ծրագրերի միջև, որոնք մշակված են բուսական որոշակի տեսակների և տեղական պայմանների համար: Ընդունելով Ֆեյրվայլդ ստանդարտի 11 սկզբունքները և կիրառելով նրա չափանիշները՝ մասնավոր ընկերությունները, կառավարման մարմինները, հետազոտական կենտրոնները և համայնքները կկարողանան բացահայտել և ուղղորդվել վայրի բույսերի հավաքման ամենաարդյունավետ միջոցներով: Ֆեյրվայլդ ստանդարտի 11 սկզբունքներն են՝

1. Պահպանել վայրի բույսերի ռեսուրսները,
2. Կանխել միջավայրի բացասական ազդեցությունները,
3. Ենթարկվել օրենքներին, կանոնակարգերին և համաձայնագրերին,
4. Հարգել իրավունքները և կիսել շահույթը,
5. Ընկերությունների և հավաքողների միջև նպաստել արդար պայմանագրային հարաբերությունների ձևավորմանը,
6. Սահմանափակել երեխաների մասնակցությունը վայրի բույսերի հավաքման աշխատանքներում,
7. Ապահովել շահույթ՝ բույսեր հավաքողների և նրանց համայնքների համար,

8. Ապահովել հավասար աշխատանքային պայմաններ վայրի բույսեր հավաքող բոլոր աշխատողների համար,
9. Հիմնվել կառավարման վստահելի փորձի վրա,
10. Հիմնվել բիզնեսի վստահելի փորձի վրա,
11. Խթանել գնորդին:

Ֆեյրվայլդ ստանդարտ 2.0 տարբերակի **գործունեության շրջանակը** ներառում է դեղաբույսերի և այլ բուսական տեսակների բաղադրամասեր՝ առաջացած վայրի բույսերի հավաքածուից՝

- ✓ բնական միջավայրից հավաքված բույսեր, բույսերի մասեր և բուսական արտադրանք,
- ✓ բնական միջավայրից հավաքված Ֆունգաս և քարաքոս:

Ֆեյրվայլդ ստանդարտի կիրառելիությունը բույսերի այս տեսակների շրջանակից դուրս (ինչպես օրինակ սկզբնապես աճեցված, կլիմայավարժեցված, ինվազիվ կամ վերատնկված տեսակներ) պետք է դիտարկվի օրինակ առ օրինակ[1]: Կենդանիները և կենդանական արտադրանքները, ինչպես օրինակ մեղրամոմը և մեղրը բացառվում են:

Ֆեյրվայլդ ստանդարտը նախատեսված է աշխարհագրական, բնապահպանական, մշակութային, տնտեսական և առևտրային լայն զանգվածների օգտագործման համար, որտեղ տեղի է ունենում բուսական ռեսուրսների լայնածավալ հավաքում: Այն ավելի շատ անդրադառնում է վայրի բույսերի հավաքմանը առևտրային նպատակով, քան գոյությանը կամ տեղական փոքրածավալ օգտագործմանը:

Ֆեյրվայլդ ստանդարտը սահմանում է սկզբունքների և չափանիշների մի շրջանակ, որոնք կարող են կիրառվել վայրի բույսերի տեսակների և նրանց բնական միջավայրերի կառավարման նպատակով: Ֆեյրվայլդ հիմնադրամը ընդունում է, որ կպահանջվեն տարբեր մոտեցումներ վայրի բույսերի ռեսուրսների կայունության և առողջության, ինչպես նաև ապրելու միջոցների բարելավման վրա էական դրական ազդեցություն ունենալու համար, որոնք կախված են վայրի բույսերի տեսակների շարունակական օգտագործումից (նկար 1): Ֆեյրվաիլդի այս սկզբունքներն ու չափանիշները կարող են օգտագործվել՝

- ռեսուրսների կառավարման նպատակով կողմնորոշում ապահովելու համար,
- նպաստելու առկա կարգավորող և ռազմավարական ծրագրերի իրագործմանը (ինչպես օրինակ՝ ազգային անվտանգություն և շրջակա միջավայրի պահանջներ, ազգային պարտավորություններից մինչև միջազգային կոնվեցիաներ),
- որպես հիմք ներքին մոնիտորինգի և հաշվետվության համար (կամավոր փորձի համակարգ),
- Ֆեյրվայլդ համակարգի սերտիֆիկացմանը նպաստելու համար:

[1] Հավելյալ տեղեկություն կարող եք ստանալ FairWild հիմնադրամի ինտերնետային կայքից՝ (www.FairWild.org) կամ ցանկության դեպքում (info@ FairWild.org):



Նկ. 1. Ֆեյրվայլդ ստանդարտ 2.0 տարբերակի իրագործման մոտեցումները

Ֆեյրվայլդ ստանդարտը զարգացող փաստաթուղթ է: Փաստաթղթի պարբերական վերանայումը հիմնված կլինի առկա փորձի և հասարակական շահագրգիռ կողմերի խորհրդակցությունների վրա:

1.2 Ֆեյրվայլդ ստանդարտ 2.0 տարբերակի կառուցվածքը

Ֆեյրվայլդ ստանդարտի 2.0 տարբերակը կազմված է բաղադրիչներից, որոնք բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Ստանդարտ բաղադրիչների ֆունկցիոնալ տարբերակումը

Տարր	Նկարագրություն
Ստանդարտ	Կանոնների համակարգ, որը մշակվել է ըմբռնման, իրագործման և/կամ լավ կառավարման փորձի գնահատման համար:
Սկզբունք	Մի հիմնական օրենք կամ կանոն, որը հիմք է ծառայում մտածելու և գործելու համար: Սկզբունքները նպատակի բացահայտ տարրերն են:
Չափանիշ	Գործընթացի կամ համակարգի մի մաս: Այն ուղին, որով ձևավորվում են չափանիշները, հնարավորություն է ընձեռում կարծիք կազմել ակտուալ իրավիճակում պատրաստակամության մասին:
Ցուցիչ	Քանակական կամ որակական ցուցանիշ, որը կարող է ստուգվել որոշելու համար գործողության համապատասխանությունը չափանիշին: Ֆեյրվայլդի համակարգում յուրաքանչյուր ցուցանիշ (վերահսկման կետ) բնութագրում է համապատասխանության տարբեր մակարդակներ՝ հեշտացնելու համար վերահսկման գործընթացը և թույլատրելու աստիճանական առաջընթացի դրսևորում:

Վերամշակված է Լամմերթս վան Բյուրենի և Բլոմի կողմից (1997 թ.)

Ֆեյրվայլդ ստանդարտի 2.0 տարբերակն ունի 11 սկզբունք և 29 չափանիշ, որոնք բավարարում են էկոլոգիական, սոցիալական և տնտեսական պահանջները՝ վայրի բույսերի կայուն հավաք ունենալու առումով: Դրանք թվարկված են այս փաստաթղթի 2-րդ գլխում: Ցուցիչները, որոնք շարադրված են նմանատիպ մեկ այլ փաստաթղթում (FWF 2010b) ծառայում են որպես վերահսկման միավորներ՝ Ֆեյրվայլդ ստանդարտի սկզբունքների և չափանիշների կիրառման առաջընթացի գնահատման համար, ինչպես նաև ծառայում են հիմք ստուգման և ներքին աուդիտի և Ֆեյրվայլդի սերտիֆիկացման համար՝ Ֆեյրվայլդ հիմնադրամի կողմից լիազորված անկախ մարմինների միջոցով: Արտաքին վերահսկման մանրակրկիտ գործընթացների, սերտիֆիկացման համար մինիմալ պահանջների և արտադրանքի պիտակավորման և Ֆեյրվայլդի ապրանքանշանի օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն կարելի է ստանալ Ֆեյրվայլդ հիմնադրամից:

2 ՖԵՅՐՎԱՅԼԴ ՍՏԱՆԴԱՐՏ 2.0 ՏԱՐԲԵՐԱԿ[2]

2.1 Ֆեյրվայլդի սկզբունքներն ու չափանիշները բերքի հավաքման գործողությունների վերաբերյալ

ԲԱԺԻՆ 1. ՎԱՅՐԻ ԲԵՐՔԻ ՀԱՎԱՔՄԱՆ և ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ	
Սկզբունք 1. Վայրի բույսերի ռեսուրսների պահպանում *Վայրի բույսերի հավաքը պետք է կառավարվի մեծամասշտաբ և այնպես, որ բուսական աշխարհն ու բուսական տեսականին պահպանվեն երկար ժամանակ:*	
1.1	**Թիրախ տեսակների պահպանությունը** Թիրախ տեսակների և բնակչության պահպանությունը գնահատվում և պարբերաբար վերանայվում է:
1.2	**Գիտելիքի վրա հիմնված բերքի հավաքման փորձ** Հավաքման և կառավարման փորձերը հիմնված են թիրախ տեսակների և հավաքի ճշգրիտ նույնականացման, քարտեզագրման, գույքագրման, գնահատման և մոնիտորինգի իրականացման վրա:
1.3	**Հավաքման կայունության տոկոսը** Թիրախ ռեսուրսների հավաքածուի տոկոսը (ինտենսիվությունը և պարբերականությունը) չի գերազանցում թիրախ տեսակների երկար ժամանակի ընթացքում վերածնվելու ունակությանը:
Սկզբունք 2. Շրջակա միջավայրի բացասական ազդեցության կանխում *Անհրաժեշտ է կանխել հավաքման գործողությունների արդյունքում առաջացած բացասական ազդեցություններն այլ վայրի բույսերի, հավաքման և հարևան տարածքների վրա:*	
2.1	**Զգայուն խմբեր և բնական միջավայրեր** Հազվագյուտ, վտանգի տակ գտնվող և անհետացող տեսակներն ու միջավայրը, որոնք ամենայն հավանականությամբ կարող են վնասվել թիրախ տեսակների հավաքումից և կառավարումից, ճանաչված և պահպանված են:

[2] FairWild ստանդարտ 2.0 տարբերակում օգտագործված տերմինների բառարանը ներառված է FWF 2010b փաստաթղթում:

2.2	**Բնական միջավայրի (լանդշաֆտի) կառավարում** Կառավարման գործընթացները, որոնք օժանդակում են թիրախ տեսակների վայրի հավաքածուին, բացասաբար չեն ազդում էկոհամակարգի բազմազանության, գործընթացների և գործառույթների վրա:

ԲԱԺԻՆ 2. ԻՐԱՎԱԿԱՆ և ԷԹԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	
Սկզբունք 3. Ենթարկվել օրենքներին, կանոնակարգերին և համաձայնագրերին *Հավաքման և կառավարման գործընթացները պետք է իրականացվեն օրինական պաշտոնավարության միջոցառումների ներքո և համապատասխանեն օրենքներին, կանոնադրություններին և համաձայնագրերին:*	
3.1	**Ձեռքբերումը, կառավարման և օգտագործման իրավունքները** Հավաքողներն ու կառավարողները թիրախ ռեսուրսներն օգտագործելու և կառավարելու հստակ և ճանաչված իրավունք ունեն:
3. 2	**Օրենքներ, կանոնակարգեր և վարչական պահանջներ** Թիրախ ռեսուրսների հավաքումն ու կառավարումը համապատասխանում է բոլոր միջազգային համաձայնագրերին և ազգային ու տեղական օրենքներին, կանոնակարգերին և վարչական պահանջներին, ներառյալ նրանք, որոնք վերաբերվում են պաշտպանված տեսակներին և տարածքներին:

Սկզբունք 4. Հարգել իրավունքները և կիսել շահույթը *Բույսերի հավաքման տարածքները և վայրի բույսերի ռեսուրսները օգտագործելու և կառավարելու տեղական համայնքների և բնիկների իրավունքները պետք է ճանաչվեն, հարգվեն և պաշտպանվեն:*	
4.1	**Ավանդական օգտագործում և փորձ, մուտքի իրավունք և մշակութային ժառանգություն** Տեղական համայնքները և բնիկներն իրավունք ունեն բերքի հավաքման գործողությունների ժամանակ վերահսկել, պահպանել իրենց իրավունքները, ավանդական գիտելիքները կամ ռեսուրսները:
4.2	**Շահույթի կիսում** Տեղական համայնքների և բնիկների հետ համաձայնագրերը հիմնված են թիրախ ռեսուրսի, մուտքի իրավունքի, կառավարման պահանջների և ռեսուրսի արժեքի ճշգրիտ գիտելիքների վրա: Համաձայնագրերը ապահովում են շահույթի արդար և իրավահավասար բաժանում ներգրավված բոլոր կողմերի միջև:

ԲԱԺԻՆ 3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ և ԱՐԴԱՐ ԱՌԵՏՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐ	
Սկզբունք 5. Նպաստել արդար պայմանագրային հարաբերությունների ձևավորմանը օպերատորների և հավաքողների միջև *Հավաքողներն ազատ մուտք ունեն տեղեկատվության բազա, որն անհրաժեշտ է իրենց հետաքրքրությունները ներկայացնելու և Ֆեյրվայլդի դրամապարգևների մասին որոշումներ կայացնելու գործընթացին մասնակցելու համար:*	
5.1	**Պայմանագրային արդար հարաբերություններ** Կազմակերպության և հավաքողների միջև տնտեսական հարաբերությունները արդար և թափանցիկ են և հնարավորություն են ընձեռում հավաքողներին մասնակցել կազմակերպության համար կարևոր որոշումներ կայացնելուն, ինչպես օրինակ՝ դրամապարգևների կամ գնային համաձայնագրերի մասին որոշումները:
5.2	**Հավաքողների միջև ոչ մի խտրականություն** Չկա ռասայական, մաշկի գույնի, էթնիկ ծագման, կրոնի, սեռի կամ քաղաքական հակման, ինչպես նաև կանանց՝ որպես գրանցված հավաքողների դեմ որևէ խտրականություն:

Սկզբունք 6. Սահմանափակել երեխաների մասնակցությունը վայրի բույսերի հավաքման գործում: *Հավաքողների կողմից բերքի հավաքումը և մշակումը կատարվում է առանց երեխաների կողմից էական օգնության:*	
6.1	**Երեխաներ և երիտասարդ հավաքողներ** Երեխաների՝ որպես բերք հավաքողների հետ, պայմանագիր չի կնքվում: Երիտասարդ հավաքողները երբեք վտանգավոր աշխատանք չեն կատարում:
6.2	**Պայմանագիր երեխաների հետ հավաքման աշխատանքի վերաբերյալ** Հավաքողները երեխաների հետ որպես հավաքման կամ մշակման գործում օգնող աշխատողներ երբեք պայմանագրեր չեն կնքում:
6.3	**Երեխաներ, որոնք օգնում են իրենց ծնողներին հավաքման գործում** Երեխաները հավաքման գործում կատարում են շատ սահմանափակ աշխատանք, այն էլ միայն վերահսկողության ներքո:

Սկզբունք 7. Ապահովել շահույթ բույսեր հավաքողների և նրանց համայնքների համար *Առևտրի միջնորդների թիվը հասցված է նվազագույնի, հավաքողները ստանում են հավաքած ապրանքի արդար արժեքը և համայնքի սոցիալական զարգացումը ապահովվում է Ֆեյրվայլդի դրամապարգևի ֆոնդից:*	
7.1	**Գնի արդար որոշում և հավաքողների վճարում** Հավաքման գործընթացի համար բերք հավաքողներին ապահովվում է երկարաժամկետ արդար գներ, գնային հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս բերք հավաքողների մասնակցություն և գումարի ժամանակին վճարում:
7.2	**Ֆեյրվայլդի դրամապարգևի օգտագործումը և վարչական համակարգը** Հենց որ ստացվում է որևէ Ֆեյրվայլդի դրամապարգև, այն փոխանցվում է դրամապարգևային ֆոնդ և դրա օգտագործման վերաբերյալ որոշումներ կայացնելիս հաշվի են առնվում հավաքողների կազմակերպությունների, ներկայացուցիչ հանձնաժողովների կամ Ֆեյրվայլդի դրամապարգևի խորհրդի շահագրգիռ կողմերի կարծիքները:

Սկզբունք 8. Ապահովել հավասար աշխատանքային պայմաններ վայրի բույսեր հավաքող բոլոր աշխատողների համար Հավաքման գործընթացները ապահովում են լավ աշխատանքային պայմաններ վայրի բույսեր հավաքող բոլոր աշխատողների համար:	
8.1	**Հիմնարար աշխատանքային իրավունքներ վայրի բույսեր հավաքողների աշխատակազմի համար** Վայրի բույսերի հավաքման ժամանակ հարգվում են բոլոր աշխատողները և նրանց հիմնարար իրավունքները:
8.2	**Անվտանգ աշխատանքային պայմաններ վայրի բույսեր հավաքողների համար** Անհրաժեշտ է ապահովել անվտանգ և հիգիենիկ աշխատանքային պայմաններ՝ հաշվի առնելով արդյունաբերական կամ ինչ-ինչ այլ վտանգներ:
8.3	**Արդար աշխատանքային պայմաններ վայրի բույսեր հավաքողների համար:** Վայրի բույսերի հավաքման գործընթացը հանդես է գալիս որպես սոցիալապես պատասխանատու գործատու և ապահովում է լավ աշխատանքային պայմաններ:

ԲԱԺԻՆ 4. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԲԻԶՆԵՍԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ	
Սկզբունք 9. Հիմնվել կառավարման վստահելի փորձերի վրա *Թիրախ տեսակների վայրի հավաքը պետք է հիմնված լինի հարմարեցվող, գործնական, մասնակցային և թափանցիկ կառավարման փորձի վրա:*	
9.1	**Տեսակային/Տարածքային կառավարման ծրագիր** Այս ծրագիրը սահմանում է հարմարեցվող, գործնական կառավարման գործընթացները և բույսերի լավ հավաքման փորձերը:
9.2	**Ինվենտարիզացիա, գնահատում և մոնիթորինգ** Վայրի հավաքի կառավարումը ապահովվում է հավաքի ճշգրիտ ինվենտարիզացմամբ, գնահատմամբ և մոնիթորինգով:
9.3	**Կայուն հավաքի կիրառումը կախված է հավաքողներից** Վայրի բույսերի հավաքման գործընթացները ցույց են տվել, որ միայն փորձառու և իրավասու հավաքողները են հավաքում թիրախ ռեսուրսները, ինչպես նաև վերահսկում են հավաքողների կողմից հավաքման հրահանգների արդյունավետ կատարումը:
9.4	**Ուսուցում և հնարավորությունների զարգացում** Ռեսուրսի մենեջերները և հավաքողներն ունեն բավարար հմտություններ (վերապատրաստում, վերահսկողություն, փորձ) կառավարման ծրագրի դրույթներն իրականացնելու և այս ստանդարտի պահանջներին համապատասխանելու համար:
9.5	**Թափանցիկություն և մասնակցություն** Վայրի բույսերի հավաքման գործընթացները տեղի են ունենում թափանցիկ ձևով՝ հաշվի առնելով կառավարման ծրագրավորումը և կիրառումը, ձայնագրումը և տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև շահագրգիռ կողմերի ներգրավումը:
Սկզբունք 10. Հիմնվել բիզնեսի վստահելի փորձերի վրա *Վայրի բույսերի ռեսուրսների հավաքումը պետք է համապատասխանի շուկայի որակական, ֆինանսական և փոխադրման պահանջներին՝ առանց վտանգի ենթարկելու ռեսուրսի կայունությունը:*	

10.1	**Շուկա/գնորդ բնորոշում** Թիրախ ռեսուրսների կայուն հավաքումը և վաճառքը կատարվում է շուկայի պահանջներին համապատասխան՝ քիչ վաճառվող ապրանքի հավաքածուն քչացնելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով:
10.2	**Փոխադրում** Թիրախ ռեսուրսների պահեստավորումը և վաճառքը ապահովվում է փոխադրման միջոցով՝ հավաքման տարածքից մինչև վաճառքի կետ:
10.3	**Ֆինանսական կենսունակություն և հաշվետու առևտրային կապեր** Մեխանիզմներն ապահովում են թիրախ ռեսուրսների վայրի հավաքածուի կայուն համակարգերի ֆինանսական կենսունակությունը:

2.2 Ֆեյրվայլդ սկզբունքները և չափանիշները վայրի բույսերի գնորդների համար

Սկզբունք 11. Խթանել գնորդին *Վայրի բույսերի հավաքածուի գնորդը (օրինակի համար ներմուծողը) ձգտում է հաստատել փոխշահավետ երկարաժամկետ առևտրային հարաբերություններ վայրի բույսերի հավաքածուի մատակարարների հետ՝ հիմնված հարգանքի, թափանցիկության և որակի առումով աջակցության վրա:*	
11.1	**Երկկողմանի փոխշահավետ առևտրային հարաբերություններ** Վայրի հավաքված բույսերի գնորդը ձգտում է հաստատել փոխշահավետ երկարաժամկետ ազնիվ առևտրային հարաբերություններ մատակարարների հետ և աջակցում է մատակարարներին տեղեկատվության, վերապատրաստման և բարենպաստ առևտրային պայմաններ ստեղծելու միջոցով:
11.2	**Ազնիվ գներ և Ֆեյրվայլդի դրամաշնորհներ** Վայրի բույսերի հավաքածուի գնորդը վճարում է արդար գին և Ֆեյրվայլդը դրամաշնորհների միջոցով օժանդակում է բույսեր հավաքողների համայնքների սոցիալական զարգացմանը:

ՀՂՈՒՄՆԵՐ

FWF. 2010 ա. *Ֆեյրվայլդ ստանդարտ 2.0 տարբերակ: Ֆեյրվայլդ հիմնադրամ, Վաինֆելդեն, Շվեյցարիա*:

FWF. 2010 բ. *Ֆեյրվայլդ ստանդարտ 2.0. տարբերակ: Արտադրողականության ցուցանիշներ: Ֆեյրվայլդ հիմնադրամ, Վաինֆելդեն, Շվեյցարիա*:

ԼԱՄԵՐԹՍ ՎԱՆ ԲՅՈՒՐԵՆ, Ե. Մ., և Է. Ա . ԲԼՈՄ, 1997, *Անտառների կայուն կառավարման ստանդարտների ձևավորման համար նախատեսված հիերարխիկ շրջանակները: Տրոփենբոս Հիմնադրամ, Լեյդեն, Նիդերլանդներ*:

MPSG. 2007. *Դեղամիջոցների և անուշաբույր վայրի բույսերի կայուն վայրի հավաքի միջազգային ստանդարտ* (ISSC-MAP). Տարբերակ 1.0. Գերմանիայի Դաշնային Հանրապետության բնության պահպանության գործակալություն (BfN), MPSG/SSC/IUCN, WWF Գերմանիա, TRAFFIC (BfN-Skripten 195), Բոն, Գլանդ, Ֆրանկֆուրտ և Քեմբրիջ:

ՄԱՅՆՍՀԱՈՒԶԵՆ Ֆ., Ս. ՎԻՆԿԼԵՐ, Ռ. ԲԵԽԻ, Ֆ. ՇՏԱՈՒԲԼԻ և Կ. ԴՅՈՒՐԲԵԿ, 2006. *Ֆեյրվայլդ տանդարտ 1 տարբերակ* (11/2006). Ֆեյրվայլդ Հիմնադրամ, Վայնֆելդեն, Շվեյցարիա:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ABS	Հասանելիության և շահույթի կիսում	Access and benefit-sharing
BfN	Գերմանիայի Դաշնային Հանրապետության բնության պահպանության գործակալություն	Bundesamt für Naturschutz / German Federal Agency for Nature Conservation
BMZ	Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարություն	Bundesministerium für Wirtschaftliche Zusammenarbeit
CBD	Կոնվենցիա կենսաբանական բազմազանության վերաբերյալ	Convention on Biological Diversity
CITES	Միջազգային առևտրի կոնվենցիա կենդանական և բուսական աշխարհի վտանգված վայրի տեսակների վերաբերյալ	Convention on International Trade in Endangered Species of Wild Fauna and Flora
CSR	Ընդհանուր սոցիալական պատասխանատվություն	Corporate Social Responsibility
ECBP	ԵՄ-Չինաստան կենսաբազմազանության ծրագիր	EU-China Biodiversity Project
FWF	Ֆեյրվայլդ հիմնադրամ	FairWild Foundation
FRLHT	Առողջապահության տեղական ավանդույթների վերականգնման հիմնադրամ	Foundation for Revitalisation of Local Health Traditions
GACP	Գյուղատնտեսական և բույսերի հավաքման արդյունավետ փորձեր	Good Agricultural and Collection Practices
GMP	Արտադրական արդյունավետ փորձեր	Good Manufacturing Practices
GSPC	Բույսերի պահպանման գլոբալ ռազմավարություն	Global Strategy for Plant Conservation
ICIMOD	Լեռնային շրջանների ինտեգրացված զարգացման միջազգային կենտրոն	International Centre for Integrated Mountain Development
IMO	Շուկայավարման էկոլոգիայի Ինստիտուտ (ՇԷԻ)	Institute for Marketecology
INGOs	Միջազգային ոչ կառավարական կազմակերպություններ	International non-government organisations
ISSC-MAP	Դեղամիջոցների և անուշաբույր վայրի բույսերի կայուն վայրի հավաքի միջազգային ստանդարտ	International Standard for Sustainable Wild Collection of Medicinal and Aromatic Plants
IUCN	Բնության պահպանման միջազգային միություն	International Union for Conservation of Nature
MAP	Բուժիչ և անուշահոտ բույսեր	Medicinal and aromatic plant
MPSG	IUCN/SSC-ի Բուժիչ բույսերի մասնագիտացված խումբ	Medicinal Plant Specialist Group of the IUCN/SSC
SIPPO	Շվեյցարական ներմուծման խթանման ծրագիր	Swiss Import Promotion Programme
SSC	Տեսակների գոյատևման հարցերով հանձնաժողով	Species Survival Commission
UN	Միավորված Ազգերի Կազմակերպություն (ՄԱԿ)	United Nations